ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 08, 21.06.2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 10.06.2024թ. որոշում (որոշում **ՈՐԽ 0102-36/Լ**) «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ կողմից նոր բաժնետոմսեր տեղաբաշխելիս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ունեցած մասնակցությանը համամասնորեն բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2024 թվականի տարեկան բյուջեի ավելացման մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102 -36/Լ
Դաս: ԾԳ
«10» հունիսի 2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ՏԵՂԱԲԱՇԽԵԼԻՍ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետը, ինչպես նաև հաշվի առնելով Բանկի Վարչության 10.06.2024թ.-ի թիվ 164/01Լ որոշմամբ Բանկի Խորհրդի հաստատմանը ներկայացված հարցը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ կողմից 16,500 (տասնվեց հազար հինգ հարյուր) հատ նոր բաժնետոմսեր տեղաբաշխելիս Բանկի ունեցած մասնակցությանը համամասնորեն 1,425 հատ, յուրաքանչյուրը 60,200 (վաթսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով Բանկի 2024 թվականի տարեկան բյուջեի հաշվեկշռի «Արժեթղթերի պորտֆելում կորպորատիվ արժեթղթեր» հոդվածն ավելացնել 85,785,000 (ութսունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**